Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2024թ. ՀՈՒԼԻՍԻ 19-20-Ը ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք.ԱԿՏԱՈՒ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը՝**

Արմեն Սիմոնյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

2024թ. Հուլիսի 19-20-ը Ղազախստանի Հանրապետություն (Ք. Ակտաու)

4. **Հրավիրող կողմը.**

Ղազախստանի տրանսպորտի նախարար Մարատ Կարաբաև

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցել եմ 2024թ. հուլիսի 19-20-ին կայացած Առաջին տրանսպորտալոգիստիկ արտահանման և ենթակառուցվածքների համաժողովին:

6. **Քննարկված թեմաները.**

Օրակարգում ներառված են եղել երկաթուղային և ավտոմոբիլային երթուղիների զարգացումը, մուլտիմոդալ փոխադարձ կապը և նավահանգիստների զարգացումը, ինչպես նաև ծանոթություն Ակտաու նավահանգստի գործունեությանը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Հանդիպման ընթացքում հնարավորություն է ընձեռնվել ծանոթանալ Ակտաու նավահանգստի գործունեությանը, մասնակից երկրների ներկայացուցիչների հետ քննարկել տրանսպորտի ոլորտին և համաժողովի օրակարգին վերաբերող հարցեր:

Մասնակցել եմ նաև <<Մուլտիմոդալ փոխադրումների միտումներ>> թեմայի վերաբերյալ պանելային քննարկումներին և Լիագումար նիստին:

Հանդիպման ընթացքում հանդես եմ եկել ելույթով՝ խոսելով նաև ՀՀ կառավարության կողմից նախաձեռնած «Խաղաղության խաչմերուկ» ծրագրի մասին:

8. <u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.</u>

Ստորագրված փաստաթղթեր առկա չեն:

9. <u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.</u>

Ակնկալվում է շարունակել Հայաստանի ակտիվ մասնակցությունը նման միջոցառումներին, ինչը հնարավորություն կտա տեղեկացված լինել տրանսպորտի ոլորտում տարածաշրջանային և գործընկերներ երկրների զարգացումներին և նախագծերին:

10. <u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>

23.07.2024